ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 170-Ա

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով ֆինանսական բաժնի պետի զեկույցը (զեկույցը կցվում է)՝ **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել 2020 թվականի սեպտեմբերի 8-ից միչև 2020 թվականի դեկտեմբերի 23-ն ընկած ժամանակահատվածում ձեռք բերված հիմնական միջոցների հաշվառումը և բաշխումը գույքային հաշվառման փաստաթղթերում՝ համաձայն հավելված 1-ի:

2. Կից հավելված 1-ի 1-4 տողերով ձեռք բերված հիմնական միջոցները հատկացնել քաղաքապետարանի ապարատին որպես սեփականություն և արտացոլել օգտագործողի հաշվեկշռում:

3. Կից հավելված 1-ի 6-7 տողերով ձեռք բերված հիմնական միջոցները հատկացնել Մասիսի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ին անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով, իսկ մինչև 25000 դրամ արժեքով ձեռք բերված գույքերը հատկացնել մանկապերտեզին սեփականության իրավունքով:

4. Կից հավելված 1-ի 5-րդ տողով ձեռք բերված գրականությունը հատկացնել Մասիսի քաղաքային կենտրոնական գրադարան ՀՈԱԿ-ին՝ գրադարանային ֆոնդի համալրման համար անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար՝ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**